

ԶԵԹԻՆԵԱՆ ԿՏԱԿ

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՎԱՐՈՎԱԿԱՆ ՆԻ ԺՈՂՈՎԱԿԱՆ

● **Փետր.** 29ին գումարուեցաւ **Միաբ. Ընդհ. Ժողովը**, նախագահութեամբ Ս. Պատրիարք **Հոր** և **ատենապետութեամբ** Տ. Տիրան Վարդապետի Ն. Ամենապատուութիւնը կարգաց բացման հետ մը, որ հրատարակուած է թերթիս այս թիւին մէջ: Ատենապետը, ի պատասխան այս հռոյն, կարգաց շնորհակալութեան ուղերձ մը, որ պիտի երևի յաջորդ թիւին մէջ:— Ժողովը ընդունեց Տ. Դէորդ, Տ. Վահան և Տ. Կիւրեղ Վարդապետներու հրաժարականը Տնօրէն Թորոսեղի անդամակցութենէն, և յաջորդ նիստին յետաձգեց երեք նոր անդամներու ընտրութիւնը:

● Մարտ 1ին, Սրբազան Պատրիարք **Հայրը**, ընկերակցութեամբ Տ. Կիւրեղ Վարդապետի, այցելեց Մր. Աթէլտուրի և Վեր. Հայր Գրգռլընի, քաղաքիս Անկիլիքան եպիսկոպոսարանին մէջ:

● Մարտ 2ին, վերստին գումարուեցաւ **Միաբունական Ընդհ. Ժողովը** և ըստ օրինի Տնօրէն Ժողովոյ անդամ ընտրեց Տ. Սմբատ Սրբազանը և Տ. Տիրան և Տ. Հայկազուն Վարդապետները: Այս առթիւ, Տ. Նորայր Վրդ., որ Ընդհ. Ժողովի Բ. Ատենապետն էր, եղաւ Ա. Ատենապետ. իսկ Տ. Գարեգին Վրդ. ընտրուեցաւ առաջին Ատենադպիր և Տ. Սիւն Վրդ.՝ երկրորդ Ատենապետ:

● Մարտ 3ի **Տնօրէն Ժողովոյ** մէջ, Լուսարարապետ Տ. Մեսրոպ Սրբազան վերընտրուեցաւ Ատենապետ. իսկ Տ. Տիրան Վարդապետ ընտրուեցաւ Ատենադպիր:

● Մարտ 7ին, Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Մեսրոպ Սրբազանի և Պ. Նուրեանի, Յուպէ իջաւ Հանգ. Պ. Օննիկ Զէթինեանի կտակին վերաբերեալ գործով մը, և երեկոյեան վերադարձաւ:

● Մարտ 9ին, Տ. Կիւրեղ Վրդ. և Պ. Նուրեան, յանուն Պատրիարքարանի, ներկայացան Ժընէվի ազգաժողովէն զրկուած զկանանց և մանկանց պաշտպանութեան յանձնաժողովին, որ գոհունակութեամբ արձանագրած է քաղաքիս հայ իգական սեռի և մանկութեան բարոյական կեանքի մասին ստացած տեղեկութիւնները:

● Աւարտած ըլլալով **Պուրհանաթէնի շինութիւնը**, որդուեցաւ ընդհուպ վարձու տալ զայն: Ինչպէս կը յիշուի, այս կալուածը, որուն համար ծախսուած է 3700 ստերլինի գումար մը, ամբողջովին շինուած է հոգեւոյն Դուրեան Սրբազան Պատրիարքի յորեւեանին առթիւ Հընդհատանի, Ամերիկայի, Եւրոպայի, Եգիպտոսի և այլ տեղերու կարգ մը պատուական ազգայնոց նուիրատուութեան արգիւնքովը, Ս. Աթոռիս կողմէ տրամադրուած գետինի մը վրայ: Հասոյթը պիտի յատկացուի ի յիշատակ Դուրեան Սրբազանի՝ գրական և կրթական նպատակներու:

Փետր. 4ի շաբաթ օրը, Յուպէի մէջ մեծաւ նոյն բաղախի մեծագիներէն **Պ. Օճնիկ Զէթինեան**, եւ յաջորդ օրը, բազումը կատարուելով, մարմինը ամփոփուեցաւ տեղոյն ազգային գերեզմանասան մէջ: Յուպէի արհաւիրութեան համար յատկապէս Յուպէ իջաւ **Գեր. Տ. Մկրտիչ Սրբազան Աղաւունի**, որ դարմանականով պատուեց հանգուցեալին յիշատակը եւ միաբանութեան անդամներէն Տ. Տ. Համազասպ, Մուսեղ, Ներսէս, Տիրան, Գաբրիէլ եւ Սիւն վարդապետներ: Հանգուցեալը քննորդին էր ծանօթ մատուական եւ բանասէր Ազն. Պ. Յր. Մուրաշի: Տարինք առաջ առակներսով էր վաճառու ժողովականաց Վարձարանին, ուր սացած էր բարի կրթութիւն, ազգային օգի եւ եկեղեցւոյ եւ Ս. Արոսոյս համար նախանձախնդիր սիրոյ զգացում: Մեծաւ 61 տարեկան, ամուրի: Իր կենդանութեանը Ս. Արոսոյս կսկած ըլլալով իր հնչուն հարսութիւնը, 3700 ստերլին, որուած է Ս. Քաղաքի վանապատկան մէկ զէթինի վրայ իր յիշատակին կառուցանել հաստաբարձը կալուած մը: Ս. Պատրիարք ցուակցական այցելութիւն տուաւ հանգուցեալին միակ ազգական Պ. Յր. Մուրաշի, օրհնեց Զէթինեանի յիշատակը, եւ նոյն ատեն իր եւ Միաբանութեան ջեմ շնորհակալիք յայտնեց Պ. Մուրաշի, կսկիկն զորմադութեան առիթ իր ցուցած աղմուսախոս բարեխոսութեան համար:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆԻ ԲԵՄԱԿԱՆ

● **Փետր.** 27 ին, շաբաթ օր, ըստ Հին Տոմարի **Տեառնընդառաջի տօնին՝** պատարագեց Լուսարարապետ Տ. Մեսրոպ Սրբազան և քարոզեց ըստ աւանդին պատշաճին Նիւթ առնելով Սիմէոնի կանխատեսութենէն՝ բացատրեց թէ ինչպէս Աւետարանի քարոզութիւնը պատճառ եղաւ աշխարհի մեծագոյն յեղաշրջումին, կրօնականութիւնը անարդար օյժերու վրայ հիմնուած հին մեծութիւնները, և բարձրացումի համարայ քաշելով անանուն բայց մաքուր զօրութեանց առիւն:

● Յաջորդ օրը, կիր., Ս. Պատարագ մատուցուեցաւ, ինչպէս ամէն երկու շաբաթին անգամ մը ընդհանրապէս, Ս. Յարութեան Տաճարի հայկական Դոգդոմայի մատարան մէջ: Պատարագեց Տ. Դէորդ Վրդ. և քարոզեց Տ. Զոհն Վրդ., որ, անդրադարձութեամբ Տեառնընդառաջի երկու տօնի տօնի զազաւարին, ողբերոց ալիսաւ զոյգին՝ Սիմէոնի և Աննայի՝ հաւատքը իրայէլի փրկութեան նկատմամբ, անոնց արտի բարեպաշտական կրակին և օրուան տօնի կցորդ եկեղեցական լոյսի և ժողովրդական հրապառուութեան արարողութեանց մէջ մատնանշեց խորհրդանշանը կրօնական կեանքի հոգեւոր հուրին, որով միայն կրնայ իրապէս պայծառանալ և ոգևորուիլ անհատներուն և համայնքներուն բարոյականը:

● Նոյն օրը, Ս. Հրեշտակապետի վանուց տաճարին մէջ Տ. Նորայր Վրդ. պատարագեց և քարոզեց Վերթայք գործեցէք մի՛ զկորստական կերակուրն, այլ զկերակուրն որ մնայ ի կեանան յաւիտեականս, զոր Որդին Մարդոյ տացէ ձեզ:

ընտրանին վրայ, հասկնցնելով թէ՛ գաղափարի և արբույթանի կեանքը հոգեւոր մտադրաւումներէ՝ միայն կրնայ ընդունել իր սնուցիչ ոյժը:

❶ Յաջորդ օրը, փետր. 29 ին, իշ. Ս. Մինասի մատրան մէջ, որ անդաստակն է մեծ Գանձարանին, և Ս. Գլխադրի և Ս. Մակարայ նուիրագործ արբարաններուն կշտին՝ իր երբեակ սեղաններովը և բազմաթիւ արքոց նշխարներու և վարդապետական և հովուական գաւազաններու՝ խաչերու՝ աշերու և այլ նուիրական կանուց համահաւաքուած գումարութեամբը, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին ամենէն հինաւորց և խորհրդաւոր մասերէն մին, Մրոց Ասովմանց և Ս. Սարգիս տօնին առթիւ, պատարագեց Տ. Մուշեղ վրդ.: Տպարտիչ էր ուխտական եռուղեւոր զոր թէ՛ երկոյի նախատեսակին և թէ՛ օրուան պատարագէն վերջ ի հանդէս բերաւ ժողովուրդը, երկուշաբթի և բարեկարգ տողանցութեամբ կատարելով աղօթքի և երկրպագութեան իր պարտականութիւնը:

❷ Մարտ 5 ի շաբաթ օրը, ամբողջ Միարանութեան՝ աշակերտաց և վանքերի գաղթական ժողովուրդին մասնակցութեամբ փառաւորուեցաւ Ս. Սահակ Պարբեւ Հայրապետի օհը, Ս. Գլխադրի մատրան մէջ՝ Ս. Պատարագով, զոր մատոյց Տ. Յակոբ վարդապետ:

❸ Յաջորդ օրը, կիր., 6 Մարտ, Ս. Յակոբայ տաճարին մէջ պատարագեց Ս. Սիւրբ վարդապետ. Ս. Պատրիարք Հայրը, անդրադարձութեամբ եւրէկուան տօնին՝ քարոզեց Ս. Սահակ Հայրապետի յիշատակին առթիւ. ներկայացուց մեծ Հովուապետին կեանքն ու գործունէութիւնը. վերլուծեց անոր տեսիլքը, անոր մէջ բերեցղացած ցուցնելով Հայ ցեղին ըմբռնումը իր բարոյական և ազգային ազգային մասին, և զրուագներ մանրամասնելով անոր կեանքէն՝ զասեր եղբակացուց եկեղեցւոյ պաշտօնէութեան և ժողովուրդին համար:

❹ Մարտ 8 ի զշ. և 10 ի եշ. օրերուն, սրտայայտ մեծիայեղութեամբ կատարուեցան Մրոց Ղ. Լեւոնդեան և Վարդանուց օհախմբութիւնները. այս վերջնոյն նախատեսակին, Շեքրաւալայ շնորահրաշխին երգեցողութեան պահուն շնորհումի պատմական գաւազանը ի ձեռին ունէր Սըրբազան Պատրիարք Հայրը, որ և յիշատակութեան մաղթանքը արտասանեց զիսաւոր նաւատակներուն զիմաւնական անուանակոչութեամբը: Վարդանուց պատարագը մատոյց Տ. Կիւրեղ վրդ.: Ս. Պատրիարքը կարդաց ծաշու գիրքը, անոր կցելով եղիշէի պատմութեան երկու սրտազրաւ հատուածներու ընթերցումը: Պատարագիչը քարոզեց, ցոյց տալով վարդանուց պատարական շարժումը ոգեւորող բարոյական նպատակը. խղճի ու կրօնի ազատութիւնը, որ զինուորական պարտութիւնէն ետքն ալ մնաց անպարտելի:

❺ Մարտ 11 ի ուրբաթ օրը, ըստ իրաւական սովորութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Աստուղ Ս. Մարկոս Եկեղեցիին մէջ: Առաւօտեան ժամերգութիւնէն ետքը, հանդիսաւոր գնացքով,

հոն ուղղուեցաւ Միարանութիւնը, Տ. Մկրտիչ Սրբազան Աղաւնունի նախագահութեամբ: Պատարագին էր Տ. Պարգև վրդ.: Մկրտիչ Սրբազան քարոզեց, նիւթ առնելով առաքելական ժամանակներու յիշատակներէն այս եկեղեցիին, որ կը համարուի շինուած ըլլալ տեղւոյն վրայ Յովհաննէս Մարկոսի այն տան, ուր հաւաքուած էին երուսաղէմի առաջին հաւատացեալները և կ'աղօթէին Պետրոս առաքելային համար, երբ գիշերը, բանտէն հրաշքով ազատուած, յանակնկալ անոնց մօտ եկաւ ան: Սրբազանը աղաւաղեալ շնորհ տառապանքի մէջ ապրող սիրելիներու համար աղօթելու մեր պարտականութեան վրայ:

❻ Մարտ 12 ի կիրակմուտի փակեալ խորանի երեկոյն, Ս. Յակոբեանց փառապանծ տաճարը տրամութեան պատկառանքն էր հագած: Յաջորդ օրը, Բաբելոնեացի կիրակին, պատարագեց Տ. Հայկազուն վրդ.: Քարոզեց Սրբազան Պատրիարքը. պարզեց եկեղեցւոյ և աշխարհի ըմբռնութիւններուն տարբերութիւնը կեանքի խորհուրդին հանդէպ. բացատրեց ճշմարիտ բարեկեղանութեան իմաստը. դատապարտելի գտաւ մարմինն ու թէ խնամքը կամ հոգը, այլ մտահոգութիւնը. ցոյց տուաւ շնթանոսական շուայութեան և փարիսեյական խտրակեցութեան վրայ գերադանցութիւնը առաքելային մատնանշած ողջախոհ և ժուժկալ կենցաղին, որ մարդը կ'ընէ մարմնապէս առողջ և հոգեպէս զգաստ, ինչ որ լաւագոյն պայմաններէն է առաքելական հրահանգութեանց:

❼ Ս. Յարութեան և Բեթղէմէմի Ս. Եննիզեան և Գեթեմանի Ս. Աստուածածնի տաճարներուն մէջ ժամերգութեան և Ս. Պատարագի հանապազօրեայ պաշտամունք կատարուեցան խաղաղ կանոնաւորութեամբ, առաջին երկուքին մէջ Տ. Սուրեն և Տ. Վահան վարդապետներու տեղութեամբ և Տ. Սահակ, Տ. Եսայի, Տ. Խորէն և Տ. Գեղամ վարդապետներու առաջին հերթապահութեամբ, և երրորդին մէջ Տ. Հայկազուն վարդապետի տեղութեամբ և Ս. Աթոռս գտնուող վարդապետներու առօրեայ կարգավարութեամբ:

❽ Սուտանի հայ հասարակութեան վարչական ժողովոյ խնդրանքին վրայ, պատրիարքական արտօնութեամբ և Տնօրէն ժողովոյ կարգադրութեամբ, Տ. Տիրան Վարդապետ մարտ 8 ին մեկնեցաւ զէպի տարաւ, Զատիկի տօնը, ըստ Նոր Տօմարի, հոն կատարելով Ս. պատարագի մատուցմամբ և հոգեւոր քարոզութեամբ միսիթարելու համար տեղւոյն հայութիւնը, որ, օգարւելով Գեր. Տ. Կուրն եպիսկոպոսի աղնուական բարեխաղաղութենէն, վերջերս սկսեւ էր ամէկ կիրակի աղօթման ժողովներու ունենալ տեղւոյն անկիւքան եկեղեցիին մէջ: Կը սիրենք յուսալ թէ Նոբրիոյ այս աղնուաւորութեան գաղութը, որ տարիներէ ի վեր ունի արդէն իր ազգային զպրօցն ու ակումբը, ժամանակը հասած պիտի նկատէ այլ ևս ունենալու իր սեփական եկեղեցին և քահանան ևս:

Մարտ 19-ի շաբաթ օրը, Տօն Ս. Թեոդորոսի գորավարին, ժամերգութիւն կատարուեցաւ եւ Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Թորոս պատմական եկեղեցիին մէջ, որ ԺԳ. դարու վերջերը շինուած է Հեթում Ա.-ի որդի Լեւոն Գ.-ի առատածնունդի օրը, 1266 թն՝ եղիպտացեաց կողմէ Հայակիկիկոյ դէմ մեղադրուած պատերազմին մէջ ինկած իր Թորոս եղբոր յիշատակին: Այս եկեղեցիին մէջ է որ հոգեւոյս Վեհապետեան պատրիարքի օրով եւ ծախքով փոխադրուած են Ս. Աթոռոյս 3000 է աւելի գրչագիրները, որոնց գրադարաններովը ծածկուած են սրբարանին ներքին որմերը: — Օրուան պատարագին էր Տ. Դուիթ Վրդ.: Ս. Պատրիարքը ձաջու Գիրքը ինք կարդաց եւ քարոզեց յանկնկալաւ: Զուգակիցօնց երկու սրբարանները, Ս. Մինասի մատուռը, գանձարան գաւազաններու, որոնցմով ծածկուած են ամբողջ որմերը, եւ Ս. Թորոսինը, իրենց պարունակութեան տեսակէտէն: Առաջինին վրայ պատկերացուց Հայ բնմը կամ եկեղեցական քարոզութիւնը, իսկ երկրորդին վրայ՝ Հայ գրիչը կամ գրականութիւնը: Բացատրեց դերը, զոր Հայութեան կրօնական եւ ազգային կեանքին մէջ սկիզբէն ի վեր ունեցած են խօսքն ու գիրը, երկուքն ալ Աւետարանի ներշնչութեամբ քաղցրացած եւ զօրացած քարերար ոյժեր, որոնց համար որքան վառ մնայ ազգին սէրը, այնքան աւելի պիտի մշտնջենաւորուին իր մէջ հոգեւոր կեանքին զգացումն ու զիտակցութիւնը:

Նոյն օրուան երեկոյին սկսաւ Ս. Յարութեան հայկական Թափօրներուն տարեկան շարքը: Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ ամբողջ Միաբանութիւն, աշակերտք եւ ժողովուրդի խումբ բազմութիւն հանդիսական գնացրով գացին Ս. Յարութեան տաճարը. Ն. Աճնն. եւ բոլոր միաբանք Ս. Գերեզմանին առջեւ իրենց ուխտը կատարեցին, եւ յետոյ եկան Հայկական Գողգոթայի մատուռը, ուր, բաց խորանի առջեւ, կատարուեցաւ կիրակամուտի ժամերգութիւն:

Յաջորդ կիրակի առաւօտուն կրկնուեցաւ նոյն գնացքը դէպի Ս. Յարութիւն, ուր, մեր Գողգոթային մէջ, յետ ժամերգութեան, պատարագեց Տ. Կիւրեղ Վրդ.: Լատիններն այդ օրը կը տօնէին Ծաղկազարդը, Յոյները՝ Պատկերամարտից դէմ տարուած յաղթանակին յիշատակութիւնը, իսկ մենք՝ ժամանակագրական յիշատակը Քրիստոսի այլակերպութեան, իրրեւ, մասնաւոր աւանդութեան մը համաձայն, Յարութենէն քառասուն օրեր առաջ տեղի ունեցած եղելութեան: Տաճարը, այս պատճառաւ, լեցուած ըլլալով այլակերպ պաշտամունքներու տօնական բարձրաձայնութեամբ, քարոզ չխօսուեցաւ: Պատարագէն վերջը տեղի ունեցաւ մեր եկեղեցական Թափօրը, որ իջնելով Գողգոթայի վերնատան մատուռէն, մեծ հանդիսաւորութեամբ երիցս շրջեցաւ Ս. Գերեզմանին շուրջը, պատկառելի զգեստաւորումին եւ սրտայոյզ երգեցողութեան ազդողութեամբ մեծ տպաւորութիւն գործելով օտարներուն վրայ, որոնք ներկայ էին բազմութեամբ, եւ միախառնելով մերինները, որոնց համար հոգեկան խրախճանքի առիթներ են այս հանդէսները:

Ս. Աթոռոյս դիւանին մէջ շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ արձանագրուած են հետեւեալ բարեպաշտական նախաձեռնութիւնները, զոր Ամերիկայէն բրած են կարգ մը պատմական ազգայիներ, ձեռամբ Ս. Աթոռոյս միաբաններէն Union City-ի Հոգ. Հովի Գեր. Տ. Մամբրէ Ծ. Վրդ. Գալթայեանի:

Պ. Կարապետ Արալանեան, փոխան ուխտագնացութեան յետուսողէմ, Տօլար 50, Տիկ. Սիրանոյշ Թիւրքիւնեան, իր զաւակին ապահովման համար՝ մասաչուզին Տ. 10, Տիկ. Հանի Թումայ Գալանեան, իր զաւակին ապահովման համար Տ. 10, Տիկ. Տիգրանուհի Պապալեան, իր Անահիտ աղջկան առողջութեան համար իրրեւ պատարագուց Տ. 50, Այրի Տիկին Մարիամ Թաւեան, պատարագուց իր ցնչեցելոց համար Տ. 20, եւ Տ. Մամբրէ Ծ. Վ. Գալթայեան, պատարագուց իր ցնչեցելոց համար Տ. 10:

ԳՊՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Մարտի առաջին եօթնեակին կատարուեցան ժառանգատուրաց վարժարանի եւ Լնծայարանի առաջին կիսամակի բնուրիները, քերանացի եւ գրաւոր: Այս առիթով վարժարանական ծրագրի նոր կարգադրութիւններ տնօրինուեցան:

Իրենց դպրոցական դատընթացքի մերձաւոր լրման առթիւ, վերջին դատարանի չորս սարկաւազներուն յանձնուեցան իրենց աւարական շարադրութեանց նիւթերը. Եղիազար Սարկաւազի՝ «Լատիններն ալ եւ Տուալորի», Սիմոն Սարկաւազի՝ «Շնորհալոյ Ընդհանրականներ», Յակոբ Սարկաւազի՝ «Յակոբ Թուրքի Կաթողիկեայցը», Ղազարոս Սարկաւազի՝ «Պօղոս Առաքելի ձանապարհորդութիւնը»:

Մարտ 12-ին, Բարեկենդանի շաբաթ զիշերը ժառանգատուրաց սաները ներկայացուցին ուսուցիչ Գ. Գ. Միաւելանի աշխատասիրած Վարդանանց Բաւերախաղը, երգերով եւ եղիշէի պատմութենէն հատուածներու արտասանութեամբ ընդմիջուած: Ներկայ էին Ս. Պատրիարքը, Միաբանութիւնը եւ ժողովուրդի հոծ բազմութիւն:

Ս. Աթոռոյ մամուլը սկսած է տպագրել Վեհ. Տ. Բարգէն Կաթողիկոսի Բիւրօստեանականը եւ Անթիլիասի ուսուցիչներէն Գ. Բիւզանդ եղիանանի Կրօնք եւ Կեանք գաղափարը եւ Ս. Պատրիարք Հօր «Հոգեւոյս Դուռեան Մարգան Պատրիարքի կենսագրական ուսումնասիրութիւնը»: